British Embassy Yerevan · Sweden Sverige · ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ · UNDP Empowered lives. Resilient nations. · UKaid from the British people

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development · WFD Westminster Foundation for Democracy · oxYGen

«Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի

տարեվերջյան ամփոփիչ հանդիպում

Հարթակի օրակարգ - 2020

2019 թ. դեկտեմբերի 19-20-ը կայացավ ԱԺ-ՔՀԿ համագործակցության բաց հարթակի տարեվերջյան ամփոփիչ հանդիպումը:

Հանդիպման նպատակները.

-ամփոփել Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հանդիպումների արդյունքները և ուղենշել մեխանիզմեր հարթակն առավել գործուն և արդյունավետ դարձնելու համար,

- ձևավորել Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի գործողությունների պլանը 2020 թվականի համար՝ ուղղված երկրում գենդերային քաղաքականության բարելավմանը:

Հանդիպմանը մասնակցեցին և Հարթակի օրակարգի ձևավորման աշխատանքներում իրենց ներդրումն ունեցան Ազգային ժողովի, Կարառավարության և քաղ. հասարակության ավելի քան 50 ներկայացուցիչներ:

Հանդիպումը կազմակերպվել էր «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում, որը իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՀՀ Ազգային ժողովի, ՕքսԵՋեն հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ, Մեծ Բրիտանիայի «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

1. **Հարթակի գործունեության տարեկան ամփոփիչ զեկույցը՝** հիմնված հարթակի մասնակիցների շրջանում իրականացված գնահատման վրա, ներկայացրեց ՕքսԵՋեն հիմնադրամի փորձագետ Թամարա Հովնաթանյանը:

Հետևյալ հղումով կարող եք տեսնել գնահատման զեկույցը:

2. **Առաջարկների մշակում.**

Հանդիպման ընթացքում տեղի ունեցած քննարկումների արդյունքում ներկայացվեցին հարթակի գործունեության արդյունավետությունը բարձրացնող մի շարք առաջարկներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններով .

- **Հարթակի մասնակիցների կազմի ընդլայնում.**

- Ընդլայնել կապերը կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ, համագործակցակցություն հաստատել Օմբուդսմենի գրասենյակի, Կանանց հարցերով խորհրդի և համապատասխան այլ գերատեսչությունների հետ,

- Ավելի շատ կին պատգամավորներ ներգրավվել, այդ թվում նրանց, ովքեր չեն կիսում հարթակում հնչեցվող դիրքորոշումները,

- Ընդլայնել պատգամավորների մասնակցությունը, այդ թվում տղամարդկանց ,

- Ապահովել հարթակի երկկողմանի կապը մարզերի հետ, կազմակերպել այցելություններ մարզեր կամ պահպանել ներառական մոտեցումը՝ ներգրավելով ՏԻՄ կին ներկայացուցիչներին հարթակի աշխատանքներին, հատկապես ՏԻՄ օրենքներում փոփոխությունների շուրջ քննարկումներին:

- **Բռվանդակության ընդլայնում.**

- Ստեղծել աշխատանքային խմբեր առավել մասնագիտական քննարկումներ պահանջող հարցերի շուրջ և անհրաժեշտության դեպքում խորհրդարանական լսումներ հրավիրել:

- Կազմակերպել արտագնա այցեր մարզեր, նաև ներառելով տվյալ մարզերի համար կարևոր հարցեր, նաև հարթակի օրակարգում առկա խնդիրները թիրախային խմբերի հետ քննարկելու համար:

- Նախապատրաստական աշխատանքներ կազմակերպել առավել զգայուն հարցերի շուրջ, այդ թվում Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման համար:

- Ավելի շատ առաջարկներ գեներացնել, աշխատանք տանել ավելի մեծ թվով առաջարկությունները օրենսդրական նախաձեռնությունների դարձնելու համար:

- Արձագանքել e-draft-ում կանանց հիմնախնդիրներին առնչվող օրենսդրական նախաձեռնություններին:

- Գյուղաբնակ կանանց սոցիալական պաշտպանվածության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների առաջարկությունների մշակում,

- Աշխատանքային օրենսգրքի բարելավման ուղղությամբ գործունեության շարունակություն՝ հիմք ընդունելով ՕքսԵՋենի կողմից կառավարությանը ներկայացված կանանց աշխատանքային իրաունքների պաշտպանության ճանապարհային քարտեզը:

- ՋԼՄ-ներում գենդերային բռնության և քարոզչության դեմ ինքնակարգավորման մեխանիզմների ստեղծման շուրջ աշխատանքների նախաձեռնում:

- Գենդերային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:

- Գործողությունների պլանի մշակում՝ կանանց դերը ՏԻՄ-երում բարձրացնելու նպատակով օրենսդրական նախաձեռնություններ և արշավներ մշակելու միջոցով:

- **Թեմաների ընտրություն.**

- Թեմաների ընտրության համար հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից ընդունված Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության գերակայությունները, որոնք համահունչ են հարթակի փոխըմբռնման հուշագրի հիմքում դրված «Կանանց օրակարգ՝ հանուն զարգացման» փաստաթղթի մոտեցումներին:

- Քննարկվող թեմաները նախապես դնել քվեարկության՝ դրանց քննարկելու առաջնահերթությունը և հրատապությունը որոշելու նպատակով:

- **Այլ ֆորմատների և գործունեության այլ ձևերի ներդրում.**

- Ավելի հաճախակի դարձնել հարթակի հանդիպումները,
- Հարթակը կարող է հրատապ հարցերով հայտարարություններով հանդես գալ,
- Հարթակի կողմից ներկայացվող առաջարկները միասնական փաստաթղթի տեսքով ներկայացնել
- Ստեղծել նաև առցանց հարթակ, որպեսզի օրակարգն ավելի ճկուն լինի և ընթացիկ խնդիրները հնարավոր լինի նախնական քննարկել և առաջարկներ ներկայացնել հենց այդ հարթակում:
- Մասնակցել և ներդրում ունենալ Պեկին +25 գործընթացին և դրան նվիրված ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 64-րդ նստաշրջանի աշխատանքներին՝ հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը այդ ժամանակահատվածում հանձնաժողովի նախագահող երկիր է հանդիսանում:
- Մաս կազմել և/կամ արձագանքել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներին և հնարավորություններին միտված մի շարք իրադարձություններին, այդ թվում.
    - Պեկինի գործողությունների ծրագրի 25-ամյակի գործընթացին,
    - Կայուն զարգացման նպատակների 5-ամյակին,
    - ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1325 բանաձևի 20 -ամյակին,
    - Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հերթական պարբերական զեկույցի ներկայացմանը:
- Միանալ ԵԽԽՎ-ի կողմից առաջարկած «ՈՉ իմ խորհրդարանում» նախաձեռնությանը, դրանով իսկ հանդես գալով ատելության խոսքը և սեքիզմը բացառող մեսիջներով և քաղ. հասարակությունը նույնպես միանա այս նախաձեռնությանը:
- Անդրադառնալ կին իրավապաշտպանների դեմ ուղղված հարձակումներին, դիտարկել հարթակի անունից համատեղ հայտարարության տարածման հնարավորությունը :
- Կանանց հարցերով խորհրդում ներկայացված ՔՀԿ ներկայացուցիչները և ԱԺ պատգամավորների միջոցով հարթակում քննարկվող հարցերը ներկայացնել ու բարձրաձայնել նաև այդ խորհրդի նիստերում:

- **Հրապարակայնության ապահովում.**
    - Հանրայնացնել հարթակի աշխատանքի դրական արդյունքները, և թեպետ հարթակի փակ լինելը առավելություն է, բայց որոշ հարցերում արժե հրապարակայնություն ապահովել,
    - Որոշ դեպքերում կարելի է քննարկումները ուղիղ եթերով հեռարձակել՝ մասնակից դարձնելով լայն հանրությանը, որպեսզի նաև հասկանալի լինի, որ Ազգային

ժողովում ներկայացված կանայք խնդիրներ են լուծում և նրանց հետ պետք է հաշվի նստել (խմբ. – սույն առաջարկը մերժվեց քննարկման ընթացքում):

- Հարթակի գործունեության հանրայնացումն իրականացնել տարեկան զեկույցի տարածման և մամուլի պարբերաբար ասուլիսների կազմակերպման միջոցով:

➢ **Կարողությունների զարգացում.**

- Միջազգային փաստաթղթերի և կոնվենցիաների շուրջ հանրային իրազեկվածության բարձրացում, այդ թվում ոչ միայն հարթակի մասնակիցների շրջանում, այլ ուսանողության և երիտասարդության շրջանում:
- Հանրայնացնել Ստամբուլյան կոնվենցիայի դրույթների և մեխանիզմների կարևորությունը և ջանքները կենտրոնանցնել դրանց՝ ազգային օրենսդրության մեջ ներդնելու ուղղությամբ՝ դրանով իսկ հասնելով կոնվենցիայի բուն նպատակին և խուսափելով Կոնվենցիայի շուրջ առկա քաղաքական ակնհայտ առճակատումից:
- Կազմակերպել պատգամավորների համար միջազգային փորձի և քննարկվող թեմաներին առնչվող միջազգային փաստաթղթերի ներկայացում,
- ԱԺ պատգամավորների կարողությունների զարգացում և փորձագիտական խմբեր ստեղծում՝ օրինագծերի և ելույթների գենդերային զգայունությունը ապահովելու, օրենդրական բացերը բացահայտելու և համապատասխան փաստագրական նյութերով ապահովելու նպատակով:

3. **Գործողությունների պլանի ձևավորում.**

Վերընշված առաջարկների հիման վրա և համատեղ քննարկումների արդյունքնում ձևավորվեց հարթակի հետագա գործունեության գործողությունների պլանը, որը ներառում է .

I. Հարթակի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու գործողություններ

II. Հարթակի քննարկումների բովանդակության ընդլայնման շուրջ գործողություններ

III. Հարթակի մասնակիցների կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ:

Ստորև ներկայացված է գործողությունների պլանի նախնական տարբերակը, որը ենթակա է հաստատման հարթակի մասնակիցների կողմից:

«Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի

2020 թ.-ի գործողությունների պլան - 2020 թ.

(Նախնական տարբերակ)

#	Գործողություն	Ծանոթություն
I. Հարթակի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու գործողություններ		
1	Հարթակի գործողությունների պլանի հաստատում/ տարեկան կտրվածքով/	Գործողությունների պլանի նախնական տարբերակը կազմված է հարթակի ամփոփիչ հանդիպման ընթացքում հնչեցված առաջարկությունների հիման վրա և ենթակա է վերջնական համաձայնեցման և հաստատման հարթակի մասնակիցների կողմից
2	Օրենսդրական նախաձեռնությունների թվի ընդլայնում, ներառյալ 2.1. E-draft կայքում կանանց հիմնախնդիրներին առնչվող օրենսդրական նախաձեռնություններին պարտադիր արձագանքում, 2.2. Կանանց հիմնախնդիրներին առնչվող օրենսդրական նախաձեռնությունների հեղինակ-պատգամավորներին առաջարկների ներկայացում, 2.3. Տարբեր օրենքների գենդերային ուղորդման վերաբերյալ առաջարկների փաթեթների կազմում և ներկայացում առանցքային դերակատարներին, 2.4. Օրենսդրական նախաձեռնությունների առաջարկների ներկայացում և քննարկում հարթակի թեմատիկ հանդիպումների ժամանակ 2.5. Օրենսդրական նախաձեռնությունների շուրջ աշխատանքային խմբերի ձևավորում / ըստ անհրաժեշտության/	

3.	Հարթակի գործունեության հանրայնացում, հարթակում քննարկվող խնդիրների տեսանելիության ապահովում, այդ թվում . 3.1. Տարեկան զեկույցի ներկայացում և տարածում 3.2. Մամուլի պարբերաբար ասուլիսների հրավիրում, որոշ թեմատիկ քննարկումների ներկայացում, 3.3. Տեսանյութերի պատրաստում և տարածում հարթակում քննարկվող խնդիրների կամ որոշ օրենսդրական նախաձեռնությունների պարզաբանման նպատակով, 3.4. Տեսանյութերի պատրաստում հարթակում քննարկվող թեմաների շուրջ իրական մարդկանց հաջողված փորձի և պատմությունների կամ տեսակետների ներկայացման նպատակով, 3.5. Պատգամավորական հայտարարությունների և խորհրդարանական լսումների գործիքակազմի կիրառում հարթակի քննարկումները հանրայնացնելու նպատակով 3.6. Հարթակի անունից միասնական հայտարարությունների տարածում	- Առավել զգայունություն ունեցող խնդիրների շուրջ հայտարարությունները արվում են հարթակի մասնակիցների միջև կոնսենսուսի գալու պարագայում:
4.	Մարզերի հետ հարթակը երկկողմանի կապի ապահովում, այդ թվում 4.1. Մարզային թիրախային հանդիպումների կազմակերպում՝ տվյալ բնակավայրի ներկայացուցիչ հանդիսացող պատգամավորների ներգրավմամբ: 4.2. ՏԻՄ-երի կին ներկայացուցիչներին հարթակի աշխատանքներին ներգրավում՝ հատկապես ՏԻՄ օրենքներում փոփոխությունների շուրջ քննարկումներին: 4.3. ՏԻՄ-երում կանանց դերը բարձրացնելու նպատակով միասնական արշավների մշակում և կազմակերպում	- Նպատակահարմարության դեպքում համատեղել մարզային հանդիպումները ընտրական գործընթացների հետ:
5	Հարթակի անունից միասնական հայտարարությունների տարածում	

6	Կանանց հարցերով խորհրդի հետ համագործակցության կայացում, այդ թվում 6.1. Հարթակի քննարկումներին խորհրդի նախագահի կամ այլ անդամների հրավիրում 6.2. Խորհրդի հետ համատեղ միջոցառումների կազմակերպում	
7	Հարթակի քննարկումների ներառականության ապահովում՝ շահագրգիռ խմբերի, այդ թվում երիտասարդական խմբերի, ազգային փոքրամասնությունների, ՁԼՄ-ների, մարզային ներկայացուցիչների ներգրավմամբ:	
II. Հարթակի քննարկումների բովանդակության ընդլայնման շուրջ գործողություններ		
8	Հարթակի քննարկումների հիմքում դնել ՀՀ կառավարության կողմից ընդունված Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության գերակայությունները, այդ թվում. 8.1. Կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցություն կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում: 8.2. Սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում: 8.3. Կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության և հավասար հնարավորությունների ընդլայնում կրթության ու գիտության ոլորտում: 8.4. Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդլայնում 8.5. Գենդերային խտրականության կանխարգելում	-Հարթակի գործունեության հիմքում փոխըմբռնման հուշագրով դրված «Կանանց օրակարգ՝ հանուն զարգացման» փաստաթղթի մոտեցումները համընկնում են Գենդերային ռազմավարության գերակայությունների հետ
9	Համատեղ քննարկում Կանանց հարցերով խորհուրդի հետ՝ օրենքների գենդերային զգայունության ապահովման և վերահսկողության իրականացման համար	

	հստակ համակարգված մեխանիզմների ներդրման շուրջ :	
10	«Կուսակցության մասին» օրենքում փոփոխությունների նախագծում առաջարկությունների ներկայացում	
11	ՏԻՄ-երի մասին օրենքում փոփոխությունների նախագծում առաջարկությունների ներկայացում	
12	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխությունների քննարկում՝ նշանակովի մարմիններում կանանց ներկայացվածությունը ապահովելու և այլ խնդիրների շուրջ	
13	Ընտրական օրենսգրքի փոփոությունների նախագծում առաջարկությունների ներկայացում ՝ գենդերային քվոտայի շրջանակում 40/60 համամասնությունը ապահովելու և այլ խնդիրների շուրջ	
14	Ազգային փոքրամասնությունների կանանց խնդիրների հետ կապված քննարկումների կազմակերպում	
15	Աշխատանքային խմբի ձևավորում Կանանց կարգավիճակի հանձնաժողովի /CSW/ 64-րդ նիստին և Պեկին +25 այլ միջոցառումներին հարթակի ներկայացուցիչների մասնակցությունը ապահովելու և իրազեկման քարոզարշավ կազմակերպելու նպատակով:	
16	Ատելության խոսքի և սեքսիզմի դրսևորումների դեմ հանրային պարսավանքի ինստիտուտի ձևավորում հարթակի մասնակիցների ԱԺ պատգամավորների և ՔՀԿ ներկայացուցիչների միասնական հանրային ակցիաների և արշավների միջոցով, այդ թվում 16.1. Պատգամվորների նախաձեռնությամբ «Not in my parlament» մոդելով և հատուկ հեշթեգերով սոցիալական մեդիայի հարթակներում ակցիայի իրականացում՝ սեքսիզմի և ատելության խոսքը խորհրդարանի ամբիոնից բացառելու նպատակով: 16.2. Հանրային ակցիաներում երիտասարդների խմբերի ներգրավում, այդ թվում street art-ի	

	ներկայացուցիչներին՝ համապատասխան գրաֆիտիներ անելու նպատակով: 16.3. Մշտադիտարկումներ իրականացում պետական այրերի հայտարարություններում ու բանավոր խոսքում սեքիզմի և ատելության խոսքի դրսևորումների վերաբերյալ 16.4. Առաջարկությունների ներկայացում ատելության խոսքի և սեքսիզմի դրսևորումների դեմ ուղղված օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ	
17	Գյուղաբնակ կանանց սոցիալական պաշտպանվածության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների առաջարկությունների մշակում, այդ թվում նրանց սոցիալական պաշտպանվածության հետ կապված խնդիրների բացահայտում և գնահատում:	
18	ՀՀ աշխատանքային օրենսգրքի բարելավման ուղղությամբ գործունեության շարունակություն՝ հիմք ընդունելով ՕքսԵԶենի կողմից մասնակցային եղանակով մշակված և կառավարությանը ներկայացված կանանց աշխատանքային իրաունքների պաշտպանության ճանապարհային քարտեզը:	
19	Աշխատանքային խմբի ձևավորում ԶԼՄ-ների գենդերային զգայունության ապահովման խնդրի շուրջ, այդ թվում. 19.1. ԶԼՄ-ների գենդերային զգայունության շուրջ մեդիա-մոնիթորինգի վերջնական եզրակացությունների և առաջարկների ներկայացում և հանրայնացում, 19.2. Միջազգային փորձի ուսումնասիրում և ներկայացում՝ ԶԼՄ-ների գենդերային զգայունությունն ապահովելու հնարավոր մեխանիզմների և օրենսդրական կամ այլ կարգավորումների առումով , 19.3. ԶԼՄ-ների մասին օրենքում հնարավոր փոփոխությունների շուրջ քննարկումների կազմակերպում / անհրաժեշտության դեպքում 19.4. ԶԼՄ-ներում գենդերային բռնության, ատելության խոսքի և սեքսիզմի դեմ ինքնակարգավորման մեխանիզմների	

	ստեղծման շուրջ քննարկումների կազմակերպում՝ ԶԼՄ-ների ու օմբուդսմենի ինստիտուտի մասնակցությամբ, այդ թվում նաև կարգավորիչ դեր ունեցող անկախ ինստիտուտի ստեղծման շուրջ 19.5. Էթիկայի կանոնագիրքի մշակում, որին կմիանան քաղաքական գործիչները, ԶԼՄ-ները և այն կառույցները, որոնք պատասխանատու են մեդիա-կոնտենտի համար, այդ թվում հեռուստաընկերությունների արտադրանքի համար 19.6. Լրագրողների էթիկայի կանոններում խտրականության, սեքսիզմի, գենդերային զգայուն բառապաշարի մասին կարգավորիչ դրույթների ավելացում 19.7. Լրագրողների համար գենդերային զգայուն բառապաշարի հստակ ձևակերպումներով մշակում ՝ սեքսիստական բնույթի արտահայտություններից խուսափելու նպատակով	
20	Առաջարկ ներկայացնել Կանանց հարցերով խորհրդին ՝ պետական միջոցներով ֆինանսավորվող միջոցառումներում կամ հանդիպումներում կանանց ներկայացվածությունը հրավիրյալների շրջանակում պարտադիր ապահովելու մասին , այդ թվում 20.1. Նախնական մոնիթորինգ իրականացնել այդ ուղղությամբ՝ պետական միջոցառումներում հրավիրյալների, փորձագետների, խոսնակների թվում կանանց մասնակցության ամբողջական պատկերը բացահայտելու նպատակով	
III. Հարթակի մասնակիցների կարողությունների զարգացում		
21	ԱԺ պատգամավորների կարողությունների զարգացում՝ օրինագծերի և ելույթների գենդերային զգայունությունը և համապատասխան փորձագիտական նյութերով ապահովելու նպատակով, այդ թվում 21.1. Կին պատգամավորների նախաձեռնությամբ աշխատանքային խմբի («womens shadow cabinet») ձևավորում օրենքների և օրենսդրական	

	նախաձեռնությունների գենդերային զգայունությունն ապահովելու նպատակով՝ տարբեր փորձագետների , այդ թվում ԱԺ իրավական փորձաքննությունների վարչությունից, ներգրավմամբ:	
22	Հարթակի մասնակիցների իրազեկվածության բարձրացում կանանց իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերի և նրանց շրջանակում պետության կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ , այդ թվում . 22.1. Իրազեկման քարոզարշավի կազմակերպում՝ պատգամավորների ու հարթակի մեջ մտնող բոլոր մասնակիցների իրազեկվածությունը Պեկին +25 գործընթացների վերաբերյալ բարձրացնելու նպատակով 22.2. Պատգամավորների շրջանում Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ իրազեկության բարձրացում	-Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (CEDAW), Կայուն զարգացման նպատակներ, 1325 բանաձև, Պեկինի գործողությունների ծրագիր, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ փաստաթղթեր և այլն.
23	Գենդերային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, այդ թվում. 23.1. Օրենսդրական նախաձեռնությունների տնտեսական և իրավական եզրակացությունից բացի նաև գենդերային ազդեցության վերաբերյալ տվյալների ներկայացման պահանջի ներդրում 23.2. Աշխատանքի և սոցիալական հարցերի և Ֆինանսների նախարարության պիլոտային ծրագրում ԱԺ պատգամավորների և մասնագետների մասնակցության ապահովում:	
24	Միջազգային փորձի ուսումնասիրություն և միջազգային այցելությունների կազմամկերպում՝ խորհրդարանի աշխատանքում գենդերային զգայուն մոտեցումների ներդրման շուրջ փորձի փոխանակման նպատակով	